ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ (2017-2021ԹԹ.) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ավագանու 26 դեկտեմբերի 2016 թվականի N11-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ): 2020 թվականի ՀՀԶԾ-ի կատարման տարեկան հաշվետվությունը կազմվել է համայնքի ղեկավարին կից գործող համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի և համայնքի աշխատակազմի կողմից իրականացված ոլորտային ծրագրերի մոնիթորինգի արդյունքում:

2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մոնիթորինգի նպատակը ոլորտային ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետները, որակը և ծավալները, դրանց տեխնիկական առաջադրանքների ու նախահաշիվների պահանջներին համապատասխան իրականացնելն է և ընթացքում բացահայտված շեղումները վերացնելը կամ, ավելի բարդ դեպքերում՝ ծրագրային փաստաթղթերը վերանայելու և դրանցում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ ՏԻՄ-երին առաջարկություններ ներկայացնելը:

Մոնիթորինգը և գնահատումն իրականացվել է ՀՀԶԾ-ի ֆինանսավորման պլանով և մոնիթորինգի անձնագրով սահմանված ցուցանիշների վերաբերյալ տվյալների հավաքագրման, դրանց փաստացի արժեքները հաշվարկելու, ելակետային ու թիրախային արժեքների հետ դրանք համեմատելու միջոցով (հավելվածներ 1-2): Ցուցանիշների արժեքների շեղումները կամ դրանց պատճառները մեկնաբանված են Հավելված 2-ի «Ցուցանիշի շեղման մեկնաբանություն» սյունակում:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համայնքի ավագանին 15 հունվարի 2021թ.-ի թիվ 10-Ա որոշմամբ հաստատել է 2021թվականի Սևան համայնքի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ):

Տարեկան պլանավորումը հնարավորություն կտա ի մի բերել տարբեր աղբյուրներից (համայնքի և պետական բյուջեներ, սփյուռք, դոնոր, միջազգային, հասարակական կազմակերպություններ, ձեռներեցներ, բարերարներ, միջհամայնքային ծրագրեր և այլն) ֆինանսավորվող ծրագրերն ու միջոցառումները:

Տարեկան աշխատանքային պլանի միջոցով հստակեցված են հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված տարեկան անելիքները, ծրագրերը և միջոցառումները, որոնք բխում են երկարաժամկետ ռազմավարական նպատակներից:

ՏԱՊ-ում ներառված են ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված ծրագրերը և միջոցառումները, միաժամանակ հստակեցված են այն գործողությունները, որոնց իրականացմամբ հնարավոր է ներգրավել ֆինանսական լրացուցիչ միջոցներ, մասնավորապես համայնքի կողմից արդեն իսկ ներկայացվել է տնտեսական զարգացման ուղղվածություն ունեցող երեք սուբվենցիոն ծրագրային հայտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ